# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 1144-Ա « 30 » սեպտեմբերի 2025թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 14-ի հ.103-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման» հիմնադրամի տնօրենի սեպտեմբերի 17-ի Դ-102906-25 գրությունը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի տեղակալ, վարչության պետի պարտականությունները կատարողի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի հ. Ն/56413-25 զեկուցագիրը.

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի, 09 խմբի, 01 դասի «Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպություններ ծրագրերին» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով նախատեսված գումարներից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման» հիմնադրամին հատկացնել 870.0 (ութ հարյուր յոթանասուն) հազար դրամ՝ Միացյալ Արաբական Էմիրությունների Աբու Դաբի քաղաքում պահպանության միջազգային միության համաշխարհային բնապահպանական կոնգրեսին մասնակցելու համար տաղավարի և էկրանի ձեռք բերման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետին կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի վրա:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**